

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie موسوعة علوم

ԽՐԱՊՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Հ. ԲՈՂԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

Թիի 29

1898 ՍԵՊՏԵՄԲԵՐ 19

Ամեն Տեղի համար Տարեկան կանխիկ 50 դանեկան, Վեցամսեայ 26 իսկ եռամսեայ, 13 դանեկան: Օտար երկրայ համար տարեկան կանխիկ 15 ֆրանկ: Թղթասարի ծախքը խմբագրութեան կը վերաբերի: Հասք 40 փարայ: Դաւաններէ բօսքի բուլ ալ կ'ընդունուի 100 դրուէի տեղ 105 դրուէ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՏՈՒԹ. Յ. ՍՈՆՏԱԼՃԵԱՆ. — Առողջ ըլլալ և առողջ ապրիլ:

ՏՈՒԹ. ՏԱՂԱԽԱՐԵԱՆ. — Մանրէաբանութիւնը մէկ դասէն:

Ղ. ԲՈՂԱՏ — Շերամաբուծութիւն. — Մակարուծային հիւանդութիւններ:

ՄԻՀՐ — Որովայնախօսութիւնը կամ Որովայնախօս ըլլալու դործնական միջոցներ:

Ղ. ԲՈՂԱՏ — Գետնախնձորի մշակութիւնը:

ԱՐԱԲՍ. — Առտնին տնտեսական. — Համեմանք, լիմօնատ, Եւայլն:

Տ. ՊՕԶԱՃԵԱՆ — Գիտական Խնդիրներ:

Ազգային, Ներքին և Քաղաքական Լուրեր:

Թղթակցութիւնը, Հանդէս, Ազգ. Եւ:

Հատր 40 փարայ

ՏՊԱԴՐ. ԳՐԻԳՈՐ Պ. ԳԱՅՍԷՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պոստ - Արի Հաստէսի, Թիւ 4

ԼՈՒԾՈՒՄ ԹԻՒ 14 ՀԱՆՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Քու խօսքերէդ թէ եւ նըսեմ,
Ճանչցայ ըզբեզ, «լուսին» վըսեմ,
Առաջինդ «լու», ասեմ ես զայն,
Միւսդ ածական, սակայն ունայն.
Է՛հ թերեւս ալ վշտերէդ մին՝
Սին վանկերդ են այո՞, լուսին,
Մի՛ այդքան լար, ողբով լըսիկ,
Օր մը կ'անցնին ցաւերդ հերիք
Միտիթարուէ իմըս «լուսին»
Մի ածգունիր ամպոց ետին:
Գեղեցիկ ես տեսցովդ վէս՝
Թէ կը յարգեմ, թէ սիրեմ քեզ.
Թէ նկարիչ, ըսայ պուէտ
Երգեն ըզբեզ պաշտեն յաւէտ.
Կարծեմ ճիշդ է Պարոն Գեղամ
Յողնեցուցիք զիս այս անգամ

Այտըն

ԶԱՊԵԼ Յ. ԵԱԶԸՃԵԱՆ

ԼՈՒԾՈՒՄ ԹԻՒ 15 ՀԱՆՆԵԼՈՒԹՅՈՒՆ

«Կարկուտ» ես դու
Գալիւ ահարկու
Եօթ տառերով
Երկու վանկով.
Առաջինդ «կար»
Գրանուի յար.
Տուներու մէջ
Մի գործ անվերջ.
Երկրորդդ «կուտ»
Զէ անօգուտ
Միշտ պիտանի
Երբեմն յարգի
Ըզբեզ սիրին
Տղայք ամէն
Եթէ գտնան
Հետդ խաղան:

ԶԱՊԵԼ ԵԱԶԸՃԵԱՆ

* * *

Տառերով եօթն, վանկերով երկու,
Մեզ վախ պատճառող «կար-կուտ»ն ես դու:
Առաջինդ է «կար» որ ամէն տուն կայ.
Երկրորդիդ համար ըսելիք չիկայ:
«Կուտ» կայ որ յաճախ դեզ մ'է սիրփիչ:
Զի մարդուս ցաւերը կը մեղմէ մի քիչ:
Կուտ՝ որու տեսակներն է անհամար,
Խաղալիկ է նաեւ տղայոց համար:

ՊԷ. Պ. Պ.

* * *

Միտքս դրի որ զայն լուծեմ
Բայց չեմ գիտեր յաջողեցայ,
Աշխատեցայ նմանցնել
Եւ իւր իմաստին հետեւեցայ:

Միտքս յանկարծ ինկաւ չան մը
Ու երբ բաժնեցի առջի վանկէն,
Ինքնին եղաւ յատուկ պէտք մը
Որ կրնէր կը գործածեն:

Գերձակ եւ կին կը կարեն ԿԱՐ
Իսկ տղայքներ կը խաղան ԿՈՒՏ.
Երբ որ ասոնք բերենք զիրար
Ալ եւս կ'ունենանք բառն ԿԱՐԿՈՒՏ:

Մայր վարժարանի բարձր կարգի ուսանող

ՄԵԼՐԱՆ Զ. ԳՅՐԱՅԵԱՆ

* * *

Լուծած են նաեւ ոտանոցիդ Պ. Պ. Մի-
քայի Գարակէօղեան, աշակ. Պեղ. Մայր.
Վարժ. Ի. Ե. սրճակի ոճալ Յակոբ Արսէնեան,
Յ. Շէլէֆեան, Ե. Յ. Վիթման, — Սամ-
սոնէն Արշակ Գ. Քէլէճեան:

Գ. ՅԱՆԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԺԵ.

Լամբար մը եւ մեմ մը իրարմէ 5 մէթր
հեռու գրուած են եւ կը վառին. փոր-
ձով մը հասկցուած է թէ լամբարին լոյ-
սը մոմին լոյսէն 6 անգամ ուստիկ է.
Երկու լոյսերուն մէջ առարկայ մը զոր
օրինակ մարտոյր մը պիտի քաջենք այն-
պէս որ վարագոյրին երկու երեսներն ալ
հաւասարապէս լուստարին. իւրաքան-
չիւր լոյսէ մըջափ հեռու լինելու է վա-
րագոյրը կամ առարկայն: (Լուսոյ պայ-
ծառութիւնը հեռուորութեան քառա-
կուսայն հետ խտտոր կը համեմատի):

Տ. ՄՅԱՅԵԱՆ

— 200 —

ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒ ԼՈՒԾՈՒՄՆԵՐՆ

Ժ. խնդիրն՝ սրով կատարեալ խաղո-
վակի մը ծանրութիւնը կը պահանջուէր.
Լուծեր են,

Պրոֆ. Երուանդ Մ. Տէօյիւճեան ա-
շակերտ Վիէննական Միտիթարեան վար-
ժարանի Ի Բանկայթի:

Պետրոս Ս. Արիկեան աշակերտ Ս.
Գրիգոր Լուսուորիչ ուսումնարանի:

Յովհաննէս Մ. Մանուէլեան աշա-
կերտ Սէն-Պէտր (S. Benoît) վարժարանի:

Հմայեակ Մ. Շիշմանեան Ի Ֆիլիպէ:

Այս վերջի երկուքին գործողութեան

մէջ փոքր տալ մը սպորտ է:

Խնդրոյն պատասխանն է 12 օրս 35

արամ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie

مجموعه علم

ԽՄԲԱԳՐԱԳԵՏՆԵՐ

Գ. ԸՈՒՄՅԱՆ



Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 29

1898 ՍԵՊՏԵՄԲԵՐ 19

ԱՌՈՂՋ ԸԼԼԱԼ ԵՒ ԱՌՈՂՋ ԱՊՐԻԼ

«Այս թիւը ըլլայ մեր իշխանարանը»

Առողջութիւնը մեր ամենէն թանկագին բարիքն է, — առողջ ապրելու համար՝ առողջ ըլլալու շաւղին մէջ մտնելու ենք: Հռչակաւորն «Վիճակագրութիւն» թէ, մարդ մը իւր մայրենի լեզուն սորվելէ առաջ և կամ սորվելու առաջ միանգամայն ուսանելու է «Առողջարանութիւն»ը, վասն զի այս օգտակար գիտութեան ամենապարզ օրէնքներուն մասին գտնէք թէ շատ ծանօթութիւն ունենալը շատ ժամանակ մեծամեծ օգուտներ յառաջ կը բերէ:

Բացայայտ ճշմարտութիւն մ'է թէ, սերունդ մը պատրաստողները մայրերն են, հետեւաբար մայր մը եթէ գիտնայ առողջ ապրելու էական պայմաններն, իւր զաւակն ալ առողջ կրնայ մեծցնել, փոքր հասակէն սկսելով:

Մարդս ինչ սեռէ և ինչ տարիքէ ալ ըլլայ բնականաբար առողջ ապրիլ կ'ու-

զէ, սակայն դժբաղդաբար շատ քիչեր գիտեն թէ, երջանիկ ապրելու առաջին տարերքը առողջութիւնը տնօրէնող պահէն է: Ուստի, եթէ մարդ գիտնայ թէ իւր բոլոր աշխատութեան միակ նպատակը, առողջ ապրիլն է, — թէ՛ մարդս հիւանդ ընող պատճառներուն մեծագոյնը՝ ապրելու յոռի եղանակէն յառաջ կ'ուզայ, անշուշտ պիտի համոզուի թէ՛ առանց առողջապահութիւն գիտնալու՝ կարելի չէ պահել իւր առողջութիւնը: Ուրեմն հաստատապէս պիտի ըսենք թէ բարեկեցութեան առաջին հիմն է առողջութիւնը, — և զայն ուսուցանող գիտութիւնն ալ, որ առողջաբանութիւն կըսուի, հարկաւ ամենակարեւոր է:

Մարդս առողջ ապրելու շնորհիւ է որ կարող պիտի ըլլայ ոչնչացնել և կամ հեռի կենալ ազգեցութեանց դէշ հետեւանքներէն, որոց դժբաղդաբար են: Թակալ կ'ըլլայ շատ ժամանակ: Ինչպէս՝ կան շատ մը երիտասարդներ և օրիորդներ, որոնք զանազան վատ ու վնասա-

րեր մուլթեանց և սովորութեանց ձեռքը դերի ըլլալով, դեռ եւս կատարելութեան չհասած, շատ կանուխէն կը խամրին, կը տկարանան, կը նիհարնան և սովորեցնողները եւեթ կը նշմարենք անոնց վրայ, վերջապէս սոսկալի վիճակի մը մէջ վերջ կուտան իրենց քաղցր կենացը, աւանդ:

Առողջութիւնը կենաց գլխաւոր համարամանքն է, մարի և մարմնայ մշակման օրէնքները ցոյց կուտայ մեղի, պէտք է որ անոր վստաստ բոլոր պատճառներէն հեռի կենանք: Այս պատճառներն են մէկ կողմանէ մուլթիւնը իւր ամէն տեսակներովը, միւս կողմանէ օդոյ, ջուրի, անուշի, հազուադէպ և բնակարանի և մարքութեան վերաբերեալ առողջապահական արարմաններու անզգուշութիւնը, որոնք մեր մարմնային վրայ մահու չափ կ'ազդեն: Օրինակ մը բաւական կրնայ ըլլար մեր ըսածը հաստատելու:

Ֆրանսացի երեւելի բնախօս մը կ'ըսէ, — բազմաթիւ միեւնոյն տարիքը և կազմը ունեցող քաղաքացի մը՝ գիւղացիի մը հետ, պիտի տեսնես որ առաջինը որչափ տկար և սովորեցնող, իսկ երկրորդը որչափ ուժեղ, կորովի և քաջառողջ է: Արդեօք որոնք են այն պատճառները որ այս մեծկակ տարբերութիւնը յառաջ կը բերեն, — գիտենք որ խեղճ գեղացին ամառ թէ՛ ձմեռ գիշերը ցերեկին խառնելով օրն ի բուն կ'աշխատի անընդհատ և ինքզինքը շատ մը զոհութեանց կենթարկէ: Արդեօք առած անուշիքը աւելի ընտիր է, — բնաւ երբէք, սեւ հացը, կտոր մը պանիր, կանաչեղէն և քիչ մը ապուր՝ իւր գլխաւոր անուշիքը կը կազմէ և ընդհանրապէս անիկա մարսելու համար մինակ ջուր կը խմէ: Բայց և այնպէս ուժեղ և առողջ է, և շատ քիչ անգամ կը հիւանդանայ, վասն զի շնչածը միշտ մաքուր օդ է:

Գիւղացին բայցօգեայ տեղ կ'աշխատի և աղատ օդ կը շնչէ, ինչ որ մեծապէս կը նպաստէ առողջութեան, մինչդեռ ասոր հակառակ մենք քաղաքի մը վնաս-

տկար, աղտոտ և զանազան ապականիչ փոշիներով խառն մթնոլորտի մը վնասաբեր ազդեցութիւններուն ենթակայ ըլլալով կը տկարանանք և հիւանդութեանց տրամագիր մարմին մը կ'ունենանք: Գիւղացին անուշիքը ինչպէս ըսինք, շատ պարզ է բայց բնական և ընդհանրապէս անհարար, մինչդեռ մերինը շատ անգամ բազմազան և գոյաւորամարս կամ աւելի եւս պատրաստութեան եղանակէն տարբեր սրբաբանութիւն մը առած կ'ըլլայ: Աղբիւրին վտիւ ջուրը շատ անգամ իւր՝ ամէն տեսակ բնականները կը կազմէ, մինչդեռ մենք ընդհանրապէս կը գիտենք զանապստ կարգի բնականաց: Ահաւասիկ թէ ի՞նչ է մէկուն տկար և սովորեցնող, իսկ միւսին քաջառողջ և ուժեղ ըլլալուն պատճառը:

Ապրելու համար պէտք ունինք անանելու և ուտելու, — Առողջապահութիւնը գիտնանք կամ ո՛չ, մարմնական այս անհրաժեշտ պարտաւորութիւնը բնապէս ստիպեալ ենք կատարելու, հետեւաբար պէտք է գիտնալ թէ մարդու օրուան մէջ քանի՞ անգամ ուտելու է և ինչո՞ւ համար, թէ ո՞ր ժամերուն մէջ և ո՞րչափ ուտելու է, պէտք է գիտնալ նաեւ թէ ի՞նչ է կերածը, ի՞նչ յատկութիւն ունի, ի՞նչպէս կը պատրաստեն զանոնք, ինչո՞ւ համար կ'եփեն և ինչո՞ւ կը ծամենք, ո՞ր կերթայ կերածը և ի՞նչ կ'ըլլայ հոն և վերջապէս ի՞նչ է ուտել և խմելու եղանակը:

Մարդու արթուն ըլլայ թէ՛ քունի մէջ, շարունակ շնչառութիւն կ'ընէ, — պէտք է գիտնալ թէ ի՞նչ է շնչառածը, — անշուշտ օդ է, բայց ի՞նչ կ'ըլլայ այդ օդը: Ինչպէս և ո՞ր կը կատարուի շնչառութիւնը, թէ ի՞նչ է օդոյ բնական և ֆիզիքական յատկութիւնը և անոր մեր մարմնային վրայ ըրած ազդեցութիւնը: Ասոնք բոլորն ալ գիտնալ և գործադրելու պէտք ունինք, — բայց ո՞վ կը սորվեցնէ մեզ այս բաները, — «Առողջաբանութիւնը»:

Կը համարձակիմ ըսել թէ, գոյաւոր-

դարձար քիչ մը ուշ պիտի հասկնանք այս օգտակար գիտութեան կարեւորութիւնը և չկայ գիտութիւն մը որ առողջաբանութեան չափ անծանօթ մնացած ըլլայ. — զարմանօք պիտի ըսեմ թէ, այսպիսի լուսաւորեալ դարու մը մէջ, առողջաբանութեան նման ամենահրաժեշտ կերպով օգտակար եղած գիտութեան մը կարեւորութիւնը և անոր սկզբունքները տարածելու փափաքն չէ զգացուած, նոյն իսկ մեր գաղտնիներուն մէջ, ո՛ւր կ'աւանդուին շատ մը «ութիւններ»: Ամէն բանէ առաջ մեր զաւակաց ֆիզիքականը պէտք է մեզի, — մեր զաւակաց դաստիարակութեան ամենակարեւոր մէկ տարրը կը կազմէ առողջաբանութեան գիտութիւնը, — աղոց մանաւանդ օրիորդաց պէտք է 'ուսուցանել առողջապահութիւնը և իրաւունք կ'ունենամ ըսելու թէ՛ արականէն աւելի իգական սեռին համար կարեւոր է այս ուսումը աւանդել, ցոյց տալով անոր կարեւոր սկզբունքները և զանաւոր գործադրելու եղանակները: Ասոր բոլորովին հակառակը կը տեսնուի, — ցաւալի է ըսել թէ մեր վարժարանաց շատեր (անշուշտ բացառութիւն կազմող վարժարաններ ալ կան) դարչահասութեան բոյներ են դարձած, ուր մեր դպրոցականը վատառողջ և ապականեալ մթնոլորտի մը մէջ ապրելով, հիմնովին կը խանդարեն իրենց առողջութիւնը, ֆիզիքապէս թէ մտաւորապէս վատոյժ էակներ կը դառնան և վերջապէս տրամադիր կ'ըլլան զանազան կարգի հիւանդութեանց: Ուրեմն, մեր դպրոցական մատաղ սերնդեան ֆիզիքական կանը անխնամ թողուած չ'ըլլալու համար, պէտք է մեր վարժարանաց վատառողջ պայմաններուն հոգ տանիլ:

Ծնողք և դաստիարակութեան ձեռնամուխ եղբայրներ պարտական չ'են արդեօք սորվեցնելու իրենց աղոց և ծանօթացնել թէ ի՞նչ է մարդը, թէ՛ որո՞նք են մարդուն կենաց առողջապահիկ լանհրաժեշտ պայմանները և թէ ի՞նչպէս

պէտք է գործադրել զանոնք:

Ինչպէս ըսինք, առողջութեան ուսումը խիստ կարեւոր է մեզի համար, ամեն հասակի, տարիքի, սեռի և առարկանի մարդիկ, այսինքն աղքատ թէ հարուստ, տէր կամ ծառայ, այր մարդ կամ կին մարդ, երիտասարդ կամ չափահաս, ծեր կամ աղոյ, ամուսնացեալ թէ այրի առողջ ըլլալ և առողջ ապրելու էական պայմանները գիտնալու պէտք ունին անխտիր. վասն զի այս ուսումը ոչ միայն մարդուն բարեօք հանդիստ, առողջ ու երջանիկ ապրիլ կը սորվեցնէ, այլ և տկար կազմուածքի տէր եղբայրները զօրացնելու և չափազանց ուժեղ և զօրաւոր, և չափազանց արիւնհային խառնուածքներն ալ կը բարեխառնէ: Դիտութիւն մ'է այս որ ոչ միայն առողջ ապրիլ կը սորվեցնէ այլ և միանգամայն կ'ուսուցանէ թէ ի՞նչ եղանակաւ ապրելով մարդս կարող կ'ըլլայ բազմաթիւ հիւանդութիւններէ զերծ մնալ:

Ասոր իբր միակ դարման, պիտի առաջարկեմ կրթական բոլոր պաշտօնէութեանց, մեր վարժարանները միշտ բժիշկի մը քննութեանը յանձնել, որ նաեւ աւանդէ առողջապահական ամենակարեւոր և տարրական գիտելիքները:

ՏՕԲԲ. Յ. ՍԱՆՏԱԼԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ

ՄԱՆՐԷՍԱՆՈՒԹԻՒՆՆ ՄԷԿ ԴԱՍԷՆ

(Երեսնութիւն 25)

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆ ԵՆ ՄԱՆՐԷՍ. — Հիւանդութիւն մը այն ինչ մանրէէն յառաջ եկած ըլլալու համար՝ բաւ չէ միայն այդ հիւանդին մէջ գտնել այն մանրէն, այլ նաեւ զայն դատելով ու մշակելով, մշակութեան հիւթն հարկ է որ յառաջ ընդէ այն հիւանդութիւնն, և հիւանդին մէջ գտնուի այն մանրէն:

Մանրէներն երբեմն միայն հպմամբ՝ մանաւանդ հուզութաւանթաց վրայ՝ մեզ հիւան-

դուրբիւն կուտան, որպէս ֆրանկախտն, Կեղծամաշկութիւնն. սակայն ընդհանրապէս մտիցանցք մը կը պահանջեն, գոնէ սկզբնական մը՝ որպէս Կատաղութիւնն, Տապաստն : Օգի մանրէներն չնչառութեան միջոցաւ ներս կը թափանցեն, որպէս Ուռականութեան, Կապուտհազի, Համադուբի (Grippe), Կեղծամաշկութեան, Եռացական ջերմերու (Fièvres éruptives) մանրէներն :

Ջուրի մանրէներն մարտողական խողովակի միջոցաւ մուտք կը գտնան ի մեզ, որպէս Ժանտատենդի և Ածխախտի մանրէներն :

Մանրէի մը՝ կենդանւոյ մը վրայ ընելիք ազդեցութիւնն փորձելու վստահ միջոցն աւոր մարմինն տակ և կամ երակաց մէջ այդ մանրէի մշակութեան պատկերնումն (inoculation) է :

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԿԵՆԴԱՆԵԱՅ. — Կենդանիներն լաւ ընդունելութիւն չեն ընելիրենց վրայ սարկել ուզող մանրէից, այլ ընդհակառակն կը մրցին նոցա դէմ : Արեան սպիտակ գնտակներն և շարակցական հիւսուածոց, փայծաղի ու թոքերու խոռոչներն պատուրջիջներն՝ այդ մանրէներն իրենց մէջ կ'ընդունին, ու բախելով կը ջնջեն զայնս (phagocytose) : Մեր մարմնոյ հիւր անմեղ մանրէներն ալ կ'աջակցին ուտիչ բջիջներու (phagocytes) գործին :

Արեան սպիտակ գնտակներն միայն իրենց խողովակաց մէջ հանդիսող մանրէներն չեն ընդունիր իրենց մէջ, այլ նաեւ կ'ենեն խողովակաց պատեաններէն, և շրջակայքն գլուխող մանրէներն ալ ջնջել կը ջանան : Այս ելից երեւոյթն «դրսեթ» (diapedese) կ'անուանի :

Արեան շիճն ալ մանրէառպան յատկութիւն մ'ունի, որ մանրէից ներկայութեամբ իւր սպիտակին մարմնոց առած մասնաւոր վիճակին կը պարտի : Աւելն ալ նմանօրինակ յատկութիւն մ'ունի :

Մանրէներն և իրենց թոյներն (toxines) մէղի հետ յերկամանց դուրս կ'ենեն, առայս երկամուրք երբեմն կը բորքոքին և Սպիտակութիւն (albuminurie) յառաջ կուգայ : Մորթն ալ կը թոյլատրէ սոցա դրսեթն, յորմէ յառաջ կուգան մարմի վրայ կարմրութիւններ և պուտեր, որպէս Եռացական ջերմերու, Ժանտատենդի և ֆրանկախտի մէջ :

Եթէ ազդող մանրէից քանակն քիչ է, և ենթական զօրաւոր ու պարագայք նպաստա-

ւոր՝ այս մրցման մէջ մարմինն կը յաղթահարէ, և մանրէներն կը յաղթուին և կ'արտադրուին, իսկ եթէ մանրէներն առատ են, մարմինն տկար է, և պարագայք աննպաստ են (ցուրտ, այլ մանրէից ընկերութիւն, շափազանց յոգնութիւն, զրկողութիւն, եւայլն) մանրէներն կը յաղթեն, կը բնակին ու կը բազմանան մարմնոյն մէջ, և կը ներգործեն իրենց ազէտարեր ազդեցութիւնն :

ԹԽՈՒՄՆ. — Հիւանդութիւն մանրէ մը՝ սպորող մարմնոյ մը արիւնըն պէս հիւանդութիւնն երեւան չդար, մինչև որ մանրէներն հիւանդութիւնն պատճառելու չափ թոյն արտադրեն՝ ժամանակ մը կ'անցնի, այդ միջոցն «թխման» ժամանակամիջոցն կ'անուանի :

Թխման ժամանակամիջոցն Կեղծամաշկի համար քանի մը ժամ է, Կարմրուկի համար 3 օր, Հարստեթի համար 8—12 օր, Մաղիկի համար 7—14 օր, եւայլն :

Կան հիւանդութիւններ՝ որոց թխման ժամանակամիջոցն մանրէից մտից տեղւոյն համեմատ կը տարբերի, որպէս Կատաղութեան ժահրն՝ որ եթէ երեսն կամ գլխէն մուտք գտնէ՝ 15—20 օրէն երեւան կ'ենէն հիւանդութիւնն, իսկ եթէ ոտքէն ու ձեռքէն է մուտքն, երբեմն քանի մը ամիսներ պէտք են : Նոյնպէս և Ուռականութեան մանրէներն եթէ թոքերու վրայ ներգործեն՝ շուտով կ'ընդհանրանայ, իսկ եթէ մարմի և կամ մի ոսկորի վրայ է՝ երկար ատեն տեղակած կը մնայ :

Երբեմն հիւանդութիւն մանրէներն սպասու վիճակի (etat latente) մէջ կը մնան երկար ատեններ, և երբ մարմինն ենթակայութիւն ստանայ՝ կը սկսին աճիլ, որպէս ե՛ն Ուռականութեան և ֆրանկախտի մանրէներն :

ՀԻԻԱՆԳԱՌԻԹ ՄԱՆՐԵԻՑ ԺԱՀՐԻ ՏԿԱՐԱՑՈՒՄՆ ԵՒ ԽՍԱՑՈՒՄՆ. — Թթուածնի, լուսոյ ազդեցութեամբ և մանրէից մշակութեան միջավայրի սննդականութեան նուազմամբ և այլ միջոցներով մանրէներն ու իրենց ժահրերն կը տկարանան : Մանրէարանք մշակութեան այլ և այլ միջոցներով յաջողին խտտացնել մանրէից ժահրի ազդեցութիւնն :

ԵՆԹԱՆԱՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՅԱԶՆԵՐՄՈՒԹԻՒՆ. — Հիւանդութեանց ենթակայութիւնն կը տարբերի ոչ միայն ըստ տեսակաց, այլ և ըստ ցեղից, տիւր, սեռից և անձի : Արդարեւ մարդոց սեւ ցեղն սպիտակէն աւելի տոկուն է

Դեղին տենդի և Պարբերական ջերմերու . ընդհանրապէս չափահասներն աւելի տոկուն են քան Լրիտաապրդներն ու մանուկներն , արք աւելի քան կանայք , և վերջապէս ենթակայութիւնն կը տարբերի ըստ անձանց :

Ձայս ամէն կրնամք բացատրել անշուշտ այդ միջավայրից իրր մշակութեան դաշտ ֆիզիկական , քիմիական և սննդական տարբեր յատկութիւններն ունենալուն , և իրենց անձնապաշտպան միջոցներու (ուտիչ րջիշներ , շիճ , և այլն) աւելի կամ նուազ զօրաւորութեամբ : Այս բնական արտադրութեանէ զատ կայ նաեւ հիւանդութեամբ ընդունուած արտադրութիւն մը . արդարեւ մանրէական հիւանդութեան ենթարկեալ մը ընդհանրապէս այլ եւս զերծ կը մնայ այդ հիւանդութենէն՝ գոնէ ժամանակ մը՝ որպէս Մազկի , Հարսանիթի , Կարմրուկի) և ժամատենդի համար :

ՊԱՏՈՒԱՍՏ ԵՒ ՇԱՐՈՒԹՈՒԹԻԻՆ — Ի վաղուց ծանօթ էր թէ ծաղկող մը այլ եւս զերծ է ծաղկէ : Հին դարերէ ի վեր չինացի և պարսիկ մայրերն իրենց զուակներն Մազկի թեթեւ տեսակէն վարակեալ սղոց քով կը դնէին որպէս զի անոնցմէ թեթեւ ծաղկի մ'առնելով՝ պաշտպանուին ընդդէմ զօրաւորին : Ապա սկսան թեթեւ Մազկի ենթարկելը վիրաց հիւթն պատկինելով փոխանցել թեթեւ հիւանդութիւնն :

Հաւանականարար Կ . Պոլսոյ մէջ ծանօթ էր այս միջոցն 1673ին , զի այն ատեն Կ . Պոլսոյ Անդղիական դեսպանի կինն զայն իւր 6 տարեկան անդրանիկ զուակին վրայ գործադրել տուաւ ի Կ . Պոլիս . նոյնն ըրաւ 1721ին ի Լոնտրա իւր երկրորդ որդւոյն համար , ի ներկայութեան բժշկաց և Կալէսի իշխանուհւոյն : Անդղիոյ մէջ պատուաւորման հետեւողներ եղան : Վոլթէն 1727ին Բարիզու մէջ սկսաւ քարոզել զայն , սակայն անսպող չունեցաւ և միայն 1764ին մուտք գտաւ ի Ֆրանսա՝ և մեծ գովաւորութեամբ : 1775ին Լուդովիկոս 16-րդ և իւր եղբայրքն պատուատուեցան . միւսնոյն դժուարութեամբ գործադրութիւնն սկսաւ ի Ջուիքերիտ , Հոլանտա , Թուրքանա , Վենետիկ , Աւստրիա , Բրուսիա , Բուլնիա և Ռուսիա :

Մինչդեռ Մազկի արհեստական փոխանցումն այսպէս օր քան զօր կ'ընդհանրանար , երկրորդ միջոց մը ծանուցուեցաւ , աւելի ա-

ւաղջապահիկ և վստահ , այն է կովու Մազկէ պատուաստումն . բացատրեմք :

Հնդիկը և Պարսիկը դիտած էին թէ՛ կովերն կ'իծող հովիւներն այս կենդանեաց ստեանց վրայ ելնող փոքրիկ պուտերէ փոխանցուելով իրենց մարմնոյն վրայ նոյնատեսակ պուտեր կը հանեն , և այնմհետէ զերծ կը մնան Մազկէ :

Ճէնըր անգլիացի րժիշկն՝ 1770ին նկատուութեան առնելով զայս՝ 1776ին հետէ սկսած էր զայն ուսումնասիրել , և 1798ին իւր աշխարհի ծանոց թէ՛ կենդանեաց նախնաւանդ կովերու Մազկի ստեանց պուտերու հիւթով տղաքներն պատկինելով կը պատուաստին ընդդէմ Մազկի հիւանդութեան . թէ՛ պատուաստեալ տղոց պատկինման ահլն ելնող պուտի ժահրով ռերիշներ կրնան պատուաստուիլ :

Կան որ կը կարծեն թէ՛ Մազկի պատուաստն ոչ միայն Հնդիկը և Պարսիկը ի գործ կը դնէին ի վաղուց անախ , այլ նաեւ Եւրոպիոյ մէջ երբեմն տեղեր՝ որպէս Անդղիոյ ինչ ինչ գաւառաց մէջ՝ կը գործադրէին զայն :

Ինչ որ ալ ըսուի և լինի , պէտք է խոստովանիլ թէ՛ Ճէնըր եղաւ Մազկի պատուաստին տարածիչն և մարդկային ազգի բարերար մը : Մազկի պատուաստն տարածուեցաւ ամէն ուրեք , և զոր կը զործադրէ այսօր համայն աշխարհ :

Բաթթէօն 1880ին Հաւերու Բուլերայի մանրէն ուսումնասիրելով յաջողեցաւ նորա ժահրն տկարացնել , և զիտեց որ՝ այդ տկարացեալ ժահրով պատուաստեալ հաւերն կը տկարանան՝ սակայն չեն մեռնիր , և կը տոկան յայնժմեան սատարի ժահրի ազդեցութեան , և թէ՛ թեթեւ կերպիւ հիւանդացեալ հաւի մը արիւնն ուրիշի մը իրր սթառուաւ կրնայ ծառայել , որպէս Մազկի ժահրահիւթն : Բաթթէօն գտած էր հաւերու Բուլերայի պատուաստն :

Բաթթէօն յաջորդ տարին յաջողեցաւ գտնել Լիժիտտի պատուաստն և քանի մը տարի վերջ Թիւլիէի հետ Խոզերու կարմրուկի (Rouget des pores) պատուաստն : Վերջապէս այս գիտուհն 1885ին յաջողեցաւ և զընտնել Կատաղութեան պատուաստն , ոչ թէ առողջներն նովաւ ընդդէմ Կատաղութեան պատուաստելու՝ այլ և խածնուածներն . բաւ էր որ՝ հիւանդութեան թիւման ժամանակա-

միջոցին մէջ յաջողութի պատուաստել՝ յառաջ քան հիւանդութեան երեւումն :

Փռանքէլ յաջողեցաւ հնդկախողերն պատուաստել ընդդէմ կեղծամաշկի, մանրէաթոյն պարունակող մշակութեան հեղուկն ժամ մը 65°—70° տաքցնելէ վերջ՝ 10—20 խոր. հար. մէթր ներարկելով սոցա մորթին տակ, և կամ որովայնային շնթաղանթի (peritoine) մէջ: 1890ին Պէհրինկ և Բիթաղաթօ ծանուցին թէ՝ ընդդէմ կեղծամաշկի պատուաստեալ կենդանեաց արեան չիճն կարող են ջնջել կեղծամաշկի թոյնն, և հետեւաբար կրնան գործածուիլ ի դարման այս հիւանդութեան :

Գիտունք փորձերով հաստատեցին թէ ուեւէ եղանակաւ հիւանդութեան մը դէմ պատուաստեալ կենդանեաց արեան չիճն այլ կենդանիներն կը պաշտպանէ ընդդէմ այդ հիւանդութեան և զայնս ակտապերժ կ'ընէ :

Աւասիկ այսպէս դրուեցաւ «Շիճարութեան» հիմն: Այս հիման վրայ աշխատեցան գիտունք և գտան հետզհետէ ժանտատենդի, թոքախտի, քուերայի, կարկամութեան և կեղծամաշկի չիճարութեան կենդանեաց համար: Այս վերջիններն նոյն իսկ մարդոց համար ի դորձ կը դրուին այժմ:

Այժմ Պէհրինկի և աւելի Ռուի չճաղեղերն կը գործածեն ի դարման կեղծամաշկի. Պէհրինկի պատրաստած չճաղեղն պատուաստեալ նապաստակաց արեան չիճն է. Ռուի չճաղեղն պատուաստեալ ձիերու արեան չիճն է: Այս վերջինն 1894ի Պուտա-Բէսդի բժշկական ժողովէն ի վեր սկսած է գործածուիլ ամէն ուրեք:

Կեղծամաշկի ենթարկելոց չուրջ 50% զոհ կ'երթային ցարդ, այժմ շնորհիւ չճաղեղի՝ ենթարկելոց հազիւ 15% կը մեռնի:

Քոխ 1890ին Ուոսկանթեան պատուաստն գտած ըլլալ հրատարակեց, այդ հիւանդութեան մանրէից 5—6 շաբաթուան մշակութեան թոյնի քաղցուենի մէջ լուծոյթն իբր պատուաստ կը գործածէր: Փորձերն չհաստատեցին իւր գիւտի ճշդութիւնն: Յայնմհետէ մի քանի գիտուններ Ուոսկանթեան չենթարկուող կենդանեաց արեան չիճով դարման մը գտնել փորձեցին, սակայն չյաջողեցան:

Տօք. Հաֆթին 1892ին գտաւ Քուերայի իտաուաստն, տկարացնելով այդ մանրէի

ժահրն. այժմ ընդ պաշտպանութեամբ անդղիական կառավարութեան՝ կը պատուաստէ հնդկներն ընդդէմ այդ հիւանդութեան: Դեռ գիտական աշխարհն վճիռ մը սուած չէ առ այս:

Ի նկատի առնելով Ֆրանկախաւ առողջացողաց այլ եւս այս հիւանդութեան ենթարկումէ զերծ ըլլալն՝ շատեր փորձած են ու կը փորձեն՝ այս հիւանդութեամբ առողջացողաց արեան չիճով պատուաստել առողջներն և կամ նոյն ենթարկեալներն: Դեռ խնդիրն ուսումնասիրութեան մէջ է:

Պատուաստն զօրաւոր միջոց մ'է ընդդէմ մանրէական հիւանդութեանց, բայց դժբաղդաբար դեռ մարդոց երեք հիւանդութեանց (Մաղիկ, Կատաղութիւն, կեղծամաշկութիւն) պատուաստն ծանօթ է մեզ. մաղթեմք որ նոցա թիւն աւելնայ:

ՏԱՐԱՓՈԽԻ ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆՔ. — Այլ եւս անկասկած կերպով հաստատուած է որ՝ բոլոր տարախոտիկ հիւանդութիւնք մանրէներէ առթեալ են. յորոց Քուերայի, Յետադարձ ջերմի (Fièvre recurrent), Խաղաարտեայ ժանտախտի (Peste à bubon), Կապուտ հաղի (Coqueluche), Համադուռի (Influenza), Տանկի (Dangue), Թոքատապի (Pneumonie) (*), Ժանտատենդի (Fièvre typhoïde), Կեղծամաշկութեան (Diphterie), Թանջքի (Dysenterie), Ուոսկանթեան (Tuberculose), Կակուղ չարակեղի (Chancre mou), Ջերմաղուրթեան (Gonorrhée), Բորի (Lèpre), Տապասաի (Erysipèle), Ածխախտի (Charbon), Խնացաի (Morve), Ջիոց քոսի (Farcin), Բասթէոնեան փտախտի (Septicémie de Pasteur), Կարկամութեան (Tétanos), մանրէներն գտնուած և ուսումնասիրուած են. սակայն դեռ Դեղին տենդի (Fièvre jaune), Եւացական ջերմերու (Fièvre éruptives) (**), Ժանտի (Typhus), Ֆրանկախտի (Syphilis), Կատաղութեան (Rage), մանրէներն գտնուած չեն, թէպէտ ասոնց մասին շատ մը աշխատութիւններ տեղի ունեցած են, և նոյն իսկ ոմանց պատուաստն իսկ գտնուած է, որպէս առիթ ունեցանք ըսելու:

(*) Տանկի բառ ոմանց համարժեքն է ցուրտ երկրաց համադուռի և տաք կլիմայի յատուկ:

(**) Եւացական ջերմ կանուանին Մաղիկ, Կարմրակի (Scarlatine), և Հարսանիթի (Rougeole) հիւանդութիւններն:

Մինչեւ ց'արդ թուած հիւանդութիւննիս միայն մարդոց յատուկ են, կամ մարդոյ ու կենդանեաց միայնգամայն կը վերաբերին. թուեմք միայն կենդանեաց յատուկ եղող գլխաւոր տարախոխիկ հիւանդութիւններն՝ որոց մանրէներն գտնուած են, և որք են Նշանական ածխախտն (Charbon semptomatique), Հաւերու քօլերան, Խոզերու մարմրուկն (Rouget des pores), Եզանց քոսն (Farcin des bœufs), Զիւց ռնգահոսութիւնն (Gourme), ևւայլն:

ՎԷՐԻՔԵՐ ԵՒ ԹԱՐԱԽԱՐԱՍԳՐԻՉ ՄԱՆՐԷՆԵՐ. — Թարախի արտադրութիւնն ալ մանրէից գործն է, սոքա ոչ միայն մարմնոց մակերեւոյթի վրայ վրայ կ'առնին և թարախ կ'արտադրեն, այլ և մարմնոց խորերն:

Թարախարտադրիչ մանրէներն մարթային գեղձերու մէջ յառաջ կը բերեն Մ'կնոռներ (Furonele), ու Կայծակներ (Anthrax), ոսկերաց վրայ ոսկերային փտութիւն (Osteomyelite), ծննդաբեր կանանց արգանդին մէջ թարախային հոսումներ, ևւայլն:

Թարախն եթէ առանց արեան մէջէն անցնելու տեղափոխուի «տեղափոխական պաւարներ յառաջ կը բերէ. իսկ եթէ արեան մէջ անցնի՝ արեան թունաւորումն կը պատճառէ՝ որոյ առաջին նշաններն են դող, Զերմութիւն. առանց կը յաջորդեն առատ քրտինք, ուժաթափութիւն, զառանցում:

Թարախարտադրիչ մանրէից թայներն մորթէն դուրս ելնել փորձելով՝ անդ յառաջ կը բերեն պոտեր, երկամուռքէն անցնելով Սպիտամզութիւն, և աղիքներէն անցնելով փորհարութիւն կը պատճառեն: Արեան թունաւորումն մինչ իսկ մահ կրնայ ազդել:

Թարախարտադրիչ մանրէից փոխանցումն տեղի կ'ունենայ թարախի, թարախաթաթախ վիրակապերու և թարախի չորցած փոշիի միջոցաւ:

ՏՕՔ. Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆ

Փորձառու վարժուհի մը կը փափարքի Հայ. Ֆրանս. Չեռագործի և Չեռագիտութեան դասեր տալ առններու կամ վարժարաններու մէջ, գոհացուցիչ պայմաններով:

Պէտք ունեցողները կրնան գիմել Խըմբադրութեանս:

ՇԵՐԱՄԱԲՈՒԾՈՒԹԻՒՆԸ

ԲԱՍԹՅՈՒԵԱՆ ԴՐՈՒՅԻՆՈՎ

ՄԱԿԱԲՈՒԾԱՅԻՆ ՓՈԽԱՆՑԻԿ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Պղպեղախ (Pébrine ք-ր- ք-ղ-)

(Շ-ր-ն-ի-ք. ք-ր- ք-ի- 28)

Հոնտերու մանրադիտային քննութիւնը մեծ յաջողութիւն չի գտաւ, և այս պատճառաւ ալ չի տարածուեցաւ, թէեւ ի սկզբան բաւական նպաստեց աղէկ հոնտ պատրաստելու համար, երբ տակաւին Մ. Բաթթիօն իր դրութիւնը երեւան չէր հանած: Այս դրութեան յաջողութիւն չի գտնելուն պատճառն ալ հետեւեալ անպատեհութիւններն են:

Մարմնիկաւոր թիթեռնիկներ կրնան մարմնիկներէ չի վարակուած հոնտեր ածել. բայց այս հոնտերը միշտ ստորին տեսակէ կ'ըլլան, բազմամամբ այ՝ հոնտերու, որոնք մարմնիկներէ զերծ են առողջ թիթեռնիկներէ ածուած ըլլալուն համար: Ասկէ վատ, միայն հոնտերու քննութեամբ կարելի չէ խնդիրը լուծել: Որովհետեւ, երբ հոնտերը արդէն ձեռքերնիս ունինք, անոնց արտադրութիւնը մեր կամքէն կախում չունի, եթէ առողջ են, տարակոյս չի կայ որ, իրենցմէ ծնած թըրթուրներն ալ առողջ պիտի ըլլան, և հակառակ պարագային ալ անտաժէտ թրթուրներու ծնունդ պիտի տան:

Ուստի հարկ է որ, աղէկ արտադրութիւն ստանալու համար աղէկ հոնտ յառաջ բերենք նախ, և ասիկա մեր ձեռքն է, որովհետեւ, ամէն սարագայի մէջ մենք կրնանք ձանձնալ լաւ և առողջ արտադրիչները: Մանրադիտակը թէեւ նուազ օգտակար գործիք մը կը դառնայ երբ հոնտերը քննել ուզենք, ընդհակառակը՝ անիկա զօրաւոր և յաղթապանձ գործիքի մը կը վերածուի երբ թիթեռնիկները քննենք:

Մարմնիկներէ զերծ չերամի հոնտ առաջ բերելու համար, Իտալացի գիտնականները՝ հոնտերու ամբողջովին կաղճակեցուցնէն վերջ ուսումնասիրելու ձեռնարկեցին: Մինչդեռ Մեծն Բաթթիօն խնդիրը ձեռք առաւ իր սկզբնաւորութեան մէջ, կազմակերպութեան առաջ, երբ տակաւին թիթեռնիկներու

ձուարանին մէջ կը գտնուին: Այս է ահաւասիկ տարբերութիւնը, որով եւեթ Բաթթուեան դրութիւնը իր անսխալութեամբ յաղթանակեց, և այսօր ամբողջ շերամարուծական աշխարհի մէջ լոյս տօնեց:

Այսպէս: ամէն հաւկիթ, որ իւր մէջ մարմնիկներ կը պարունակէ, անպատճառ ժառանգականութեամբ ստացած է զանոնք. ուստի և աւելի բանական է ժնտուել զանոնք արտադրողներուն մէջ: Զի մոռնանք ըսելու որ, այդ մարմնիկները հաւկիթներուն մէջը կը գտնուին, և ոչ թէ դուրսը, ինչպէս մէկ քանի գիտնականներ կը կարծէին: Շատ անգամներ թէ եւ հաւկիթներուն վրայ այդ մարմնիկներէն կը գտնուի պատահաբար, բայց անոնք, ծնած թրթուրներուն վրայ չեն կրնար ազդել, եթէ առաջուց լուացքներով և մաքրողական խնամքներով ոչնչացուին:

Ընդհանրապէս դեղնադայն, թուխ, ճրուգած և տեքստիլ գէշ հոնտերը շատ մարմնիկներ կը պարունակեն:

Միայն թէ, շատ մը պարագաներու մէջ Մ. Պալպիանիի ուսումնասիրութեանց մէկ արդիւնքը կրնանք օգտակարապէս գործածել, երբ հասկնալ ուզենք թէ, ծախու առնուելիք հոնտ մը մարմնիկներէ վարակուած է՞ թէ ոչ: Այս գիտնականը կ'ըսէ թէ, շերամի կամ ուրիշ թիթեռներու հաւկիթները, որ զերծ են մարմնիկներէ և առողջ հետեւաբար, ալքալային հակազդեցութիւն մը (réaction) ունին. մինչդեռ մարմնիկներէ վարակուածները, ընդհակառակն թիթուային հակազդեցութիւն մը, և այս թիթուային հակազդեցութիւնը, այնչափ շատ կ'ըլլայ, որչափ մարմնիկներ գտնուած են այդ հոնտերը ածող էգ թիթեռնիկներուն մէջ:

Հիմա, հասկնալու համար թէ, ծախու առած հոնտերնիդ պղպեղախտի (գարաթապան) մարմնիկներ կը պարունակեն թէ ոչ, հետեւեալ փորձը կատարեցէք, որ առանց մանրադիտակի պէտք ունենալու, կրնաք վարկենապէս գաղափար կազմել, և ըստ այնմ չարժիլ: Գեղազործներուն քով կը գտնուի «բարիէ տը թուռնաօլ» կոչուած կապոյտ թուղթ մը, զոր կը գործածեն հեղուկի մը կամ սեւէ տեղի մը թիթու կամ ալքալի (սօտա, բոթաս պարունակող) ըլլալը հասկնալու համար, և ահաւասիկ թէ ի՞նչպէս:

Փորձուելիք նիւթէն կաթիլ մը այդ թուղ-

թին վրայ կը կաթեցնեն, եթէ հեղուկէն կաթած տեղը կարմրի խոլոյն, յայտնի կ'ըլլայ թէ, այդ հեղուկը թիթու է. հակառակ պարագային, եթէ թուղթը իր գոյնը պահէ, կրնայ չեղոք կամ ալքալային ըլլալ, այս վերջի երկու յատկութիւններն ալ որոշելու համար, առաջուց այդ թուղթի մէկ կտորը թէթեռ թիթուի մէջ ձգելով կը կարմրցնեն, զորովնակ ջուրի մէջ քիչ մը քաջախ, վիմոն, եւ այլն խառնելով, զոր չորացնելէն վերջ կը գործածեն այդ նիւթին չեզոք կամ ալքալային ըլլալը հասկնալու համար, այսինքն՝ եթէ փորձուելիք նիւթը ալքալային է, կարմրցած թուղթը խոլոյն կը կապուտացնէ, եթէ ոչ անապեղեցիկ կը մնայ: Ահա այս կրկնա՛լի փորձերով կ'որոշուին նիւթերու թիթու, ալքալային կամ չեզոք յատկութիւններն:

Ենթադրենք որ, հիմա շերամի հոնտերը փորձել կ'ուզենք. կ'առնենք անոնցմէ մէկ քանի հատ, և կապոյտ թուղթին վրայ կը ձգմենք, և թուղթը լայսին բռնելով, եթէ կարմրցած բիծեր տեսնենք վրան, պէտք է հաստատապէս որոշել որ, հոնտերը պղպեղախտի մարմնիկներ կը պարունակեն, և այնչափ շատ, որչափ կարմրութիւնը սատիկ կերելի: Առողջ հոնտերը, ընդհակառակն, վերը յիշուածին պէս թուղթը առաջուց կարմրցնելով, վրան կը ձգմեն, որ՝ եթէ կապոյտ բիծեր յառաջ բերեն, իրենց առողջութիւնը կը հասկցուի:

Հաւկիթներու թիթուութեան աստիճանը, ինչպէս վերը ըսինք, զանոնք ածող էգ թիթեռնիկներուն մէջ գտնուած մարմնիկներու թւոյն կը համեմատի: Եւ արդարեւ, Մ. Բաթթուեան հաստատած է որ, հաւկիթներու մարմնիկներէ վարակման խնդրոյն մէջ, արու թիթեռնիկներու ազդեցութիւնը գրեթէ ոչինչ է: Այսպէս՝ չափազանցօրէն մարմնիկներէ վարակուած էգ թիթեռ մը երբ զուգաւորի կատարելապէս առողջ արուի մը հետ, առհասարակ ախտավարակ հաւկիթներ կ'ածէ. մինչդեռ առողջ էգ մը, երբ զուգաւորի խոտ շատ մարմնիկներ պարունակող արուի մը հետ, ընդհանրապէս առողջ հաւկիթներ կ'ածէ, և բացառաբար՝ վարակուած հաւկիթներ:

Բոլոր այս տեսութիւններէն կրնանք հետեւեցնել թէ՛

1. Թիթեռնիկները կրնան մարմնիկներէ

կան փոքրիկ դասընթացք մը ընել — թէեւ նիւթերնէս պիտի չեղինք, սակայն մեր ընթերցողները պիտի ուզեն զմեզ արգարացընել — :

Ամէն մարդ գիտէ թէ գիրքը կը բաժնուի ձայնաւորներու և բաղաձայններու : Բառգիրքերը ձայնաւորներու մասին սապէս սահման կուտան . առոնք գիրքեր են՝ որոնք իրենք իրենցմէ ձայն մը ունին և որ կը կազմուին միայն հնչուն օգի արձակմամբ . չորս թունք, լեզու և ակուսյ գործ չունին հոն : Առանց նեղուելու ձայնաւորներու թիւէն, որ ընդհանրապէս շատ աւելի մեծ է մեր ընդունածէն, որովհետեւ անոնց ձայնը կըրնայ փոխուիլ ու կազմել ճշմարիտ իջնող ձայնաւոր մը, և դառնալ ռեզային արձակման այլեւայլ առիթներու և եղանակն բոլոր համաձայն, միայն պիտի ըմբռնենք թէ ձայնաւորներուն հնչումը չրթունքներու հետ ո՛րեւէ աւելցում չունի, և ասի որովայնախօսութեան տեսակէտով շահագրգիռ կէտ մըն է :

Որովհետեւ բաղաձայններն ալ են «այբուբենի» այն գրքերը, որոնք ձայն չունին իրենք իրենցմէ և որ կրնան արտասանուիլ միայն ձայնաւորներուն կցուելով . հնար է վանազան չարքերու բաժնել զանոնք այն գործարարներու համաձայն՝ որոնք կ'օգնեն անոնց արտասանութեան .

1. ԼԵԶՈՒԱՅԻՆ . անոնք, զորս լեզուն կազմելու կը նպաստէ մասնաւորապէս . ինչ. 1, Ռ :

2. ՔՄԱՅԻՆ . Անոնք, որոնց ձայնը կը կազմուի իրենին ներքեւ՝ քիմքին միջուկը . ինչ. Ն, Կ, Գ, Ք :

3. ԱՍՏՄԱՅԻՆ . Ասոնց ձայնն ալ կը կազմուի լեզուին ծայրը չրթունքին կրթնցնելով . ինչ. Թ, Տ, Դ, Ս, Զ :

4. ԿՈԿՈՐԴԱՅԻՆ . Ասոնք ալ կ'արտասանուին ուժգին շնչառութեամբ մը և կոկորդի շարժումով մը . ինչ. Կ, Գ, Ք, Ժ, Խ, Դ, Ծ, Զ, Յ :

5. ՇՐԹՆԱՅԻՆ . Ասոնց գործն ալ չրթունքին հետ է գլխոււրադար . ինչ. Բ, Պ, Փ, Ֆ, Մ :

Այս բոլոր կարգերը կը բաժնուին որոշ դասերու, և իրարու հետ բաղաձայնութեան նոյն դասի բաղաձայնները կրնան ըլլալ «թաւ» ու «լերկ» :

ՇՐԹՆԱՅԻՆՆԵՐՈՒՆ ԴԱՍԸ ԱՅՍՊԷՍ Է .

Շնչող կամ սուղ չրթնային, Թաւ Ֆ Լերկ Վ
Պարզ » » Փ » Պ
Հագագային » » Մ

Ձայնաւորներն ու բաղաձայնները քննելով, տեսանք որ ամէնքն ալ չրթունքները չգործածելով կրնան արտասանուիլ՝ «չրթնային»ներէն զատ . այս վերջիններու համար չրթունքներու գործածութիւնը կարեւոր է . որովայնախօսը չպիտի կրնայ չրթունքները չի շարժելով արտասանել զանոնք : Ծնարկոտ է այս Պ, Բի համար և աւելի մասնաւորաբար Մի . վասն զի որոշ փորձով մը կարելի է յաւելոյլ Ֆ և Վ սուղ չրթնայիններն արտասանել լոկ չրթունքներու «անտեսանելի և ներքին» մկանները շարժելով :

Րոովայնախօսը Փ, Պ, Մ գրքերը առանց չրթունքները շարժելու չկրնալով արտասանել, կրցածին չափ պիտի ջանայ թռցնել զանոնք և կամ քիչ կամ շատ փոփոխուած նիւթերով յօգաւորումներ դնել անոնց տեղ :

Թէեւ բոլոր բաղաձայնները ու ձայնաւորները, չրթնայիններէն զատ, արտասանուելու համար չրթունքները շարժելու չենք կարողիր, սակայն սովորական լեզուին մէջ այս գործարարները անգաղար կը շարժեն առանց մեծ օգուտ մը ունենալու : Ուրեմն այս ունակութենէն պէտք է զերծ մնայ որովայնախօսը ուզած ատեն, և այս նպատակին պիտի հասնի հետագայ վարժութիւններէն մին ի գործ դնելով :

1. Կենալ հայելիի մը առջեւ և սովորական ձայնով ըսել քանի մը պարզ բառեր, ո՛հ, այո՛, ո՛չ, ագել, եւայլն, ոչ չրթնային գիր չունին, և զանոնք արտասանած ատեն ջանալ դէմքի բոլոր մկանները այնպէս մը բռնել, որպէս զի չրթունքներու և դէմքի վրայ ո՛րեւէ շարժում հնար չըլլայ նշմարել : Այս վարժութիւնը բազմիցս պէտք է կրկնել՝ օրը կէս ժամ զոհելով անոր . ամէն մէկ անգամ պէտք չէ տեսնալ ամար վարժեանէն աւելի :

2. Վերին ծնօտը ստորին չրթունքին կըրթնցնելով բերանը գոցել, բնական ու համարձակ արտայայտութիւն մը պահելով հանգիստ : Այս արտայայտութիւնը չփոխելով ձայնաւորները արտասանել : Երբ այսպէս դիւրութեամբ և ճշտօրէն այլեւայլ տեսակ ձայնաւորներ յաջորդեմ արձակել, կը շարունակենք նոյն հրահան զը ոչ-չրթնային բա-

դաճայինները ձայնաւորներէ ետքը դնելով ինչպէս՝ ԱՍ, ԱՏ, ԱՆ, ԻՐ, ՕՏ, ԱԿ, ԷԳ, ԻԼ, ԻԺ, եւ այլն։ յետոյ բաղաձայնները առաջ դնելով ՍԱ, ՏԱ, ՆԱ, ԲԻ, ՏՕ, ԿԱ, ԳԷ, ԼԻ, ԺԻ, եւ այլն։

Տեսա՞նք թէ չրթունքները չչարժելով չենք կրնար չրթնայինները սրտատանել, և թէ որովայնախօսները կ'ստիպուէին զանոնք վարպետութեամբ թռչնել կամ անոնց տեղ դնել մեծաւոր յողաւորումներ։ Այս եղանակը երբեմն անսպասելիութեանց տեղի կուտայ, և Թուդ Մակարէ՝ Անդղլիացոյ նշանաւոր որովայնախօսը հետագայ կերպը ցոյց կուտայ, որ կը կայանայ ունկնդիրներուն դիմացը կողմնակի կենտրոն և չրթնայինները արտասանելուն մէջ՝ լոկ բարձրացնելով չրթունքի այն մասերը՝ որ կը գտնուին ունկնդիրներու անտեսանելի կողմին վրայ։ Արուեստ է այս կողմնակի դիրքը բնականէն յառաջ բերել այն ատեն երբ անհրաժեշտ է արտասանել չրթնայինները։ Խորհուրդը լաւ է, ուստի պիտի փութանք անկէ օգտուիլ և կիրարկել, երբ առիթը ներկայանայ։ Շրթունքներու կէսով այսպէս խօսիլ կրնալու համար շատ անգամ պէտք պիտի ըլլայ վարժուիլ չրթնայինները արտաբերել չրթունքին ձախ կամ աջ մասով երեք երեսով այն հայեցիներէն մէկուն առջեւ, որոնց կը հանդիպինք հիմա շատ մը զարդասենականերու մէջ։ այսպէս պիտի կըրնանք համրել այն շարժումները՝ զոր կ'ընենք չրթնայիններու ձայները, այսինքն որովայնախօսականութեան խոշնդոտները (կամ «քար գայթակղութեան»ները), հանելու համար։

Պէտք է, ինչպէս կ'ըսէինք, այս վարժութիւնը փոխել աջէն ձախ, որպէս զի ունկնդիրներուն դարձած դէմքի կողմին համեմատ կարենանք ուղղաւոր շարժումները տալ միւս կողմին։ Դժուար չեն ասոնք, ճշմարիտ «բռնդիք» մը կարեւոր է միայն։ Եւ սակայն խորհուրդ պիտի տանք նոր սկիզբին որ չըրթնայիններուն հետ զբաղի այն ատեն երբ կըրնայ դիւրութեամբ արտասանել, մէկալ ձայնաւորներն ու բաղաձայնները, կատարեալ անշարժութեամբ չրթունքներու և դէմքի։

(Շարունակելի)

ՄԻԶՐ

ԳԵՏՆԱԽՆՁՈՐԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ

(Շարունակելի է ԲԻ-28)

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՀՈՂԻ. — Գետնախնձորը խոտապահանջ և սպառիչ տունկ մ'է, ուստի առատ հոտոյթ առնելու համար, պէտք է արտը պատշաճ կերպով պարարտացած ըլլայ։ Ուր որ ալ ըլլայ, և ինչ որ ըլլայ մշակութեամբ գետնախնձորի տեսակը, արտադրութեամբ հոտոյթը միշտ համեմատ կ'ըլլայ հողին արդիւնաւորութեան։ Նոյնպէս, հողին բաղադրութիւնը և ֆիզիքական կազմութիւնն ալ պէտք է նկատաւորութեան տանել, եթէ շնորհքով հոտոյթ ստանալ ուզէք։ Այսպէս՝ եթէ հողերն իդ կաւային է, թանձր, կոշտ, խոնավ, պէտք է առատօրէն կիր (քիւլէճ) կամ կրակաւ (marne, բէքմէյլ թօփրապը) խառնել, և խրամներով ուրդել, աւելորդ ջուրերը վազցնելու համար։ Իսկ եթէ ընդհանրապէս հողերն իդ թեթեւ և բնութեամբ չոր է, պէտք է խառնել մէջը դետերու, լիճերու կամ աւազաններու տիղմ, կաւային հող։

Գետնախնձորի մշակութեան համար, ամենէն յարմարագոյն աղբը արջառներուն (գարա սըղըր) է։ Շըվարցի և Թայէւի ըսածին նայելով, արտը քաշուած արջառներու աղբին 1 օխան կ'արտադրէ վեր ի վերոյ 1 օխա գետնախնձոր։ Ենթադրելով որ, միջին հաշուով, գետնախնձորի հոտոյթը մէկ տեղական արտավարի համար հաւասար ըլլայ 2000 օխայի, և ըստ Մ. Պուսէնկոյի, 500 օխա ալ կանաչ ցօղուն և տերեւ, որ ընդամենը կ'ընէ 2500 օխա, այս քանակութիւնը ստանալու համար պէտք է միջին հաշուով 2000 օխայի չափ կիսով չափ փոսած աղբ արածել արտին մէջ։

Հետագայ փորձերէն յայտնի կ'երեւի թէ, այս տունկը ոչ այնչափ անկենդանային նիւթ պարունակող պարարտութիւն կը պահանջէ, որչափ շատ ալքալի (բօթաս, սօտա) պարունակող և դիւրութեամբ բաղադրուած աղբեր։

1. Աղբի, լիճերու տիղմի և մամուռի խառնուրդ, արտադրած են խիստ սքանչելի գետնախնձորներ 228 քլ.
2. Օճառի գործարաններու մնացորդներ, արտադրած են գոհացուցիչ և գեղեցիկ գետնախնձորներ 215 քլ.

3. Աղբ և կիր, միջին գետնա-
խնձորներ 226 քլ.
4. Աղբի և մոխրի խառնուրդ.
խիստ գեղեցիկ գետնախնձորներ 192 քլ.
5. Մի միայն ախուրի աղբ. խիստ
գեղեցիկ գետնախնձորներ 176 քլ.
6. Փայտի սղոցուք. խիստ գեղե-
ցիկ գետնախնձորներ 171 քլ.
7. Օճառի գործատանց մնացորդ-
ներ, աղբի հետ խառնուած. նոյն-
պէս գեղեցիկ 166 քլ.
8. Ծխանի մուր (գուրոււմ), բու-
սահող (փտած ձիւղեր և արմատներ,
հող դարձած) և մոխրի իրարու խառ-
նուած. խիստ գեղեցիկ 151 քլ.
9. Հաւեղինաց աղբի և մոխրի
խառնուրդ. բաւական գեղեցիկ 132 քլ.
10. Կնիւնի (սազ) փտած ման-
րուք և կիր. խիստ գեղեցիկ գետ-
նախնձորներ 116 քլ.
11. Հասարակ աղ և բուսահող,
միջակ գետնախնձորներ 112 քլ.
12. Փայտի սղոցուք և կիր, մանր
գետնախնձորներ 110 քլ.
13. Կիր և մոխիր. միջակ 107 քլ.
14. Փայտի սղոցուք և կիր, մանր
գետնախնձորներ 106 քլ.
15. Մի միայն կիր. միջակ գետ-
նախնձորներ 104 քլ.
16. Խաղախորդարանի մնացորդ-
ներ և աղբ, բաւական գեղեցիկ 81 քլ.
17. Առանց ուռէ աղբի. խիստ
մանր գետնախնձորներ 75 քլ.
18. Խաղախորդարանի մնացորդ-
ներ և կիր. խիստ մանր 42 քլ.
19. Մի միայն խաղախորդարանի
մնացորդներ, գէշ 19 քլ.
- Թէև այս վերի ցուցակին մէջ, գործա-
ծուած աղբերու չափը չէ գրուած, բայց ու-
րոշապէս կը տեսնուի թէ, աւելի մ'ը տեսակ
աղբերը յարմարութիւն ունին գետնախնձո-
րի մշակութեան:
- Գետնախնձորը առատ աղբ կը պահանջէ.
Իւրաքանչիւր տեղական արտաւարի համար
(40 կանգուն երկայն և 40 կանգուն լայն)
4000էն 6000 քաշի չափ աղբ պէտք է:
- Այն հողերը՝ որ բնականէն չոր են, և կը
գտնուին այնպիսի կլիմաներու տակ, ուր ա-
ւելի երկարատեւ երաշտութիւններէ (չորու-

թիւն) կը վախցուի՝ քան խոնաւութենէ,
պէտք է պարարտել զանոնք, կովանոցի թարմ
և չի բաղալուծուած աղբերով, զորս պէտք է
մեծ քանակութեամբ տնկարկումի ատեն մի-
այն խառնել հողին հետ, և կամ իբր ծած-
կոց, տնկարկումէն վերջ, հողին երեսը տա-
րածել: Այս երկու միջոցներով, տունկերու
բոլորովն նպաստաւոր խոնաւութիւն մը
կեդրոնանալով, տիրող սովորական երաշտու-
թեան առաջը առած կ'ըլլաք, և հետեւա-
բար ալ, գոհացուցիչ հատոյթ մը կ'ստանաք:

Սակայն երբ այս երկու միջոցներէ մին, կա-
ւային խոնաւ արտերու մէջ գործադրէք,
բոլորովին հակառակ հետեւութիւն մը յառաջ
կուգայ. որովհետեւ՝ գոյացած խոնաւու-
թեան չափազանցութենէն ննխիչ (փտեցնող)
խոնորում մը յառաջ գալով, թէ տնկուած
գետնախնձորներու մեծ մասը կը փտի, և թէ
մնացածներն ալ մանրադիտային հիւանդու-
թիւններէ կը վարակուին, որոց վրայ պիտի
խօսինք:

Այս կարգի պնդակազմ կաւային խոնաւ
հողերը երբ գետնախնձորի մշակութեան սահ-
մանունին, պէտք է շատ կանուխէն սղոցել, և
գործածուած աղբն ալ փտած ըլլալու է այն-
չափ, որչափ հողը զուտ կաւայինի կը մօտե-
նայ, պնդակազմ և խոնաւ կ'ըլլայ: Ահա այս
պատճառաւ այսօր Եւրոպայի մէջ, և մասնա-
ւորապէս այս տեսակ մշակութեանց համար,
կաւային խոնաւ հողերը կը պարարտացնեն
մի միայն քիմիական պարարտներով (engrais
chimiques):

Աչնան, ամենէն առաջ աղբը կը տարա-
ծեն հողին երեսը (փտած ըլլալու է), յետոյ
կը հերկեն, ձմռան վերջը երկրորդ անգամ
մ'ալ կը հերկեն, և երրորդ անգամ մ'ալ տըն-
կարկումէն անմիջապէս առաջ, կամ տնկար-
կումին ժամանակ, ինչպէս ըսինք արդէն՝
որպէս զի աղբը լաւ մը խառնուի հողին հետ:

Ֆլանտրիոյ երկրագործները սովորութիւն
ունին, յունիս ամսոյ մէջ գետնախնձորները
գոմէզով (աղբի ջուր, շէրպէթ) ջրելու, որիէ
անմիջապէս վերջը կը թմբեն (պօղպղը լեց-
նել): Այս առթիւ, իւրաքանչիւր տարտալարի
համար կը գործածեն 15էն 25,000 օխայի չափ
գոմէզ, որ մասնաւոր գոմէզի տակաւունքով
արտ կը կրեն և անով կը ջրեն ամբողջ տարտ-
ածութիւնը: Այսպէս ջրելէն վերջը երբ տունկե-
րը թմբեն, գոմէզով յագեցած հողը ամբողջ
տունկերու բոլորովն հաւաքուելով, արտա-

կարգ կերպով ասոնց բուսականութիւնը կ'աւելնէ, և մեծ քանակութեամբ ելունդներ կ'արտադրուին:

Գոմէզի գործածութիւնը որչափ դիւրին և կարելի է եւրոպայի ագարակներու մէջ, այնչափ դժուար է սակայն մեր երկրին համար, ագարակներու մէջ յատկապէս շինուած աղբանոցներ չի գտնուելուն պատճառաւ: Թէեւ խնդիրէն քիչ մը պիտի շեղինք, բայց օգտակարութենէ զուրկ չեմ դատեր այս առթիւ քիչ մը բացատրութիւն տալը: Հոն՝ եւրոպայի ագարակներուն մէջ աղբանոցները կը շինեն փոսերու մէջ, քարուկի պատերէ շրջապատուած, ինչպէս և յատկապէս քարաշէն կամ կաղնիով (չիմէնթօ) ծածկուած, որպէս զի՝ աղբերուն ջուրերը հողը չի ծծելով յատակը խնայ, ուր մասնաւոր բացուածք մը կայ, ծածկուած երկաթէ կառկարայով, որ կը ծառայէ, յատակը իջած աղբի ջուրերը, աղբանոցին տակը կամ մէկ քովը յատկապէս պատրաստուած հորի մը մէջ վազցնելու: Այս հորին վրայ հաստատուած մասնաւոր ջրհանով մը գոմէզը վեր կը հանեն, և պէտք եղած տեղերը կը գործածեն: Բայց որովհետեւ այս գոմէզը շատ զօրաւոր է, աղբերուն մէջ գտնուած դիւրահալ աղբերը և սնուցիչ գոյեղները իր մէջ լուծած ըլլալուն, ուղղակի կերպով գործածելը շատ վնասակար կ'ըլլայ, և ոչ մէկ բայց կրնայ դիմանալ իր արտադրող ուժին, և անմիջապէս կը չորնայ: Ահա այս պատճառաւ, պարագային համեմատ, կէս առ կէս, կամ 1ին, 2, 3, 4, 5 և աւելի անգամներ ջուր կը խառնեն և այնպէս կը գործածեն:

(Շրջանակէն)

2. FOLUS

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

Հ Ա Մ Ե Մ Ա Ն Ք

(Շրջանակէն. 74-ի 27)

Մանանելը կը գործածուի աւելի գոյաւարամարս կերակուրներու հետ, որոնք մարսուելու համար մեծ քանակութեամբ մարսանիւթի պէտք ունին, ինչպէս միս, ճարպ, եւայլն:

Հրապարակը ծախուած պատրաստ մանանելները, իրենց մարսողական յատկութիւնը մասամբ կորուսած են, իրենց մէջ քացախ և ուրիշ հեղուկ պարունակելով:

Եւրոպական կարգ մը խոհակերային պատրաստութեանց մէջ, մանանելին կը խառնեն նաեւ՝ դարիճիկեկ, մշկընկոյղ, սափռան, վանեղեա, լիմօն կամ քացախ, եւայլն, որոնք ախորժարեր են:

Սոխն ու սխտորն ալ համեմատու կարգէն են, թէեւ շատեր զանոնք գործածելէ կ'զրուշանան, իրենց արտաշնչութեան գէշ հոտ մը հաղորդելուն համար, բայց մարսողութեանց նպատակաւոր ըլլալուն, անոնց գործածութիւնը կը յանձնարարուի: Ճոշէն ետքը եթէ քիչ մը ազատգեղ կամ քեղակարոս (ֆրէնկ մայրանոց, սէնֆէօլ) ծամէք, զգալաւոր անոնց հոտը կ'անցնի:

Համեմատու կարգն են նաեւ «թուռչիներ»ը, որոնք խիստ ախորժարեր են, եթէ քիչ գործածուին, ընդհանրապէս գոյաւարամարս բուսեղէններու հետ գործածելու է, ինչպէս լուբիա, սիսեռ, եւայլն:

Բայց ամենէն կարեւորագոյն համեմը ՀՈԳԵԿԱՆ ԱՋԴԵՑՈՒԹԻՒՆՆ է, և ախորժակի բացուելը կամ գոցուելը շատ մը բաներէ կախումն ունի, զոր օրինակ, սեղանի մաքրութեան, սեղանակիցներու զուարթութեան, գրութիւն խօսակցութեան եւայլն. իսկ տիրութիւն, աղտոտութիւն, առանձնութիւն մարդու ախորժակը գոյելու պատճառ կ'ըլլան:

Եւ ասոր համար հին տառններ՝ իշխանները ճաշած տառնին, կատակախօսները իրենց սեղանակից կ'ընէին, և ոմանք ալ նուագով կը ճաշէին: Ուստի՝ երբ կ'ուզէք ախորժակով ճաշել, և ճաշելու լաւ մարտեղ, միշտ զուարթ եղէք, մանաւանդ սեղանի վրայ:

*
*
ԼԻՄՕՆԱՏ

Մէկ կամ աւելի լիմօնի կեղեւները

սակեցէք, և արտակեղեւը ամանի մը մէջ
դնելով՝ վրան քիչ մը տաք ջուր լեցու-
ցէք ու ծածկեցէք: Կուտերը հանելով
ջուրը քամեցէք: Զատ զաւաթի մը մէջ
չաքար դնելով՝ տաք ջուր լեցուցէք վը-
րան, և երբ շաքարը կոտորելապէս հա-
լի, լիմօնի ջուրը վրան աւելցուցէք: Ձեր
ճաշակին համեմատ պաղ ջուր լեցուցէք,
և յետոյ լիմօնի արտակեղեւի բուռա-
ջուրը՝ լիմօնատը համեմելու համար:

ԿՆԴՐԻՏԻ (ՊԷՆՋԻՆ)* ԽՄՈՐ ՄԸ՝ ԱՐԱՏՆԵՐԸ
ՄԵՔՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

20 կռամ եռացեալ ջուրի մէջ, հա-
լեցուցէք 12 կռամ ճերմակ կարծր օժտու,
որ կարելի եղածին չափ շատ նատրոն
(սոստ) պարունակէ իր մէջ: Թողուցէք
այսպէս մինչեւ որ պաղի. յետոյ խառ-
նեցէք 3 կռամ խառցեալ անուշադր (նի-
շաուրը), և աւելցուցէք քիչ քիչ 100 կը-
ռամ մաքրուած կնդրիտ:

Երբ այս ամէնը կատարէք, պէտք ե-
ղածին չափ անուշահոտութիւն խառնե-
ք այս խմորին մէջ, և գործածեցէք: Լաթի
կտոր մը այս խմորին մէջ թաթ-
խեցէք և արձանները չփեցէք, ու յետոյ
մաքուր լաթով մը շփելով չորցուցէք:

ԱՐԱՔՍ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Աւստրիական դեսպան Պ. Քալիչէ հե-
ռագրով շնորհակալութիւն յայտնեց է
Ս. Պատրիարք Հօր՝ Աւստրիոյ կայսրու-
հին մահուան առթիւ յայտնած ցաւակ-
ցութեանց համար:

— Վանի 66 Հայ բանտարկեալներէն
զատ՝ որոնք ասկէ առաջ ազատ արձակ-
ուած էին, նոր տեղեկութեանց համա-
ձայն մնացեալ 11 բանտարկեալներուն
դատաւարութիւնն ալ աւարտած ըլլա-
լով ազատ արձակուել են:

— Ազգ. Հիւանդանոցի նորընտիր
Քննիչ-բժիշկ Թորգոմեան էֆէնտին հրա-

ժարեք է իր պաշտօնէն, իր Բերայի ա-
րուեստակիցներու չարախօսութեան ձե-
ւին ներքեւ ցոյց տուած հակառակու-
թենէն զգածուելով: Այնպէս կը կար-
ծենք թէ հանրային գեր մը ստանձնող
անձեր այնքան կարեւորութիւն տալու
չեն իրենց մասին եղած պարսաւներու կամ
գովեստներու:

— Կ'ըսուի թէ Բերայի Արուեստա-
նոցը պիտի փոխադրուի Լուսեան վար-
ժարանի վերնայարկը, ու այդ երկու
հաստատութիւնները իրարու պիտի միա-
ցունեն որ կազմակերպութեամբ, որպէս
զի բոլոր աշակերտները կարենան օղ-
տուիլ ձեռարուեստի գասերէն:

— Ս. Փրկչի Ազգ. Որբանոցի Խնա-
մակալութեան ընտրութիւնը կատարուած
ըլլալով, Ուսումն. Խորհուրդը հաստատեց
զանի. Խնամակալութեան անդամներն
են. Պօղոս էֆ. Քէրէստէճեան, Պետրոս
էֆ. Կարապետեան, Դրիգոր էֆ. Ալեա-
նաքեան և Լեւոն էֆ. Բանիկեան:

— Ս. Պատրիարք Հայրը անցեալ Կի-
րակի առաւ իւսկիւտարի Ս. Խաչ եկեղե-
ցիին տօնախմբութեան առթիւ հանգի-
սաւոր Պատարագ մատուցանելով քարոզ
խօսեցաւ, և երեկոյեան Խաչվերացի ա-
րարողութիւնը կատարեց: Երեքշաբթի
օր այցելեց անդին թաղային և մանու-
ւոր վարժարանները:

— Ս. Պատրիարք Հայրը յանձնարա-
րեց Սամաթիոյ Տ. Թադէոս քահանային՝
որ Պատրիարքարանի Քարուղար Կիւր-
ճեան էֆ. ի հետ եկեղեցական ղգեոս,
գիրք և անօթ ժողովելու ձեռնարկէ գա-
ւառական աղքատ եկեղեցիներու համար:

— Ասկէ առաջ Ֆէսհանէի մէջ աշ-
խատող Հայ գործաւորները թուով 65,
Ս. Պատրիարքին դիմած են ինդրելով
որ՝ հարկ եղած տեղը դիմում ըլլայ զի-
րենք իրենց գործերուն մէջ վերահաս-
տատելու համար:

— Ս. Խաչի տօնին առթիւ Արմաշ
ուխտի զացողներու թիւը այս տարի շատ
է եղեր. մի միայն 150 կռք Պոլսէն

ուխտաւոր դացեր են, Փոքր Ասիայի կողմէն ալ բազմաթիւ ուխտաւորներ Արմաշ հասեր են:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Քիւիական պատրաստութեանց համար Կ. Պոլսի մէջ գործարան մը հաստատելու մենաշնորհ խնդրեց գեղագործ Իւաննի էֆէնիսի:

— Աթէնքի Օսմ. գետպանը Հելլեն կառավարութեան պաշտօնապէս ծանուց թէ՛ Թեոպոլիոյ մէջ Թուրքերու գոյքերը յաւիչասկիզբ աւազակներուն դատերը կը ձգձգուին: Նախարարապետը պատառնանք թէ՛ հարկ եղածը ի գործ պիտի դրուի:

— Քաղաքապետութիւնը նաւեր պատրաստեց Կ. Պոլիս բերելու համար այն 600000 օխա ածուխը զոր Սելանիկի պանքան յատուկ պայմանագրութեամբ Քաղաքապետութեան տրամագրութեան տակ պարտի դնել:

— Իլմիտի մէջ մեծ հրդեհ մը ծագելով երկու հարիւր խանութ, մէկ տուն և մէկ մէսճիտ այրեցան: Զրին անբաւականութեան և շէնքերուն փայտաշէն ըլլալուն՝ հրդեհը շուտով տարածուեցաւ: Այրած շէնքերը ընդհանրապէս վաճառականներու մթերանոցներ էին, արմատիքի, թիֆթիքի, ատաղձի, եւայլն. այրած շէնքերուն 10ը հազիւ ապահովագրուած էր. ընդհանուր փնտրը մինչեւ 100000 ոսկիէն աւելի կը հաշուի. հրդեհէն փնտաւորները մեծ մասամբ հայ են:

— Լիազաթի սակի չքաղրամ արուեստը Պոլսկաւններուն էքզարկին:

— Դաւառներու մէջ շերամաբուծութիւնը զարգացնելու համար Հանրային Պարտքի վարչութիւնը ձրիաբար թիթենիի տունի ու սերմ պիտի խրկէ գաւառները:

— Հանրօգուտ Շինութեանց Նախա-

րարութիւնը գրեց Ներքին Գործերու Նախարարութեան՝ ժողովրդին ծանուցանելու թէ՛ ապահովագրութեան ընկերութեանց հետ պայմանագրութիւն չկնքեն:

— Հելլենական շոգենաւային նոր ընկերութիւն մը պիտի կազմուի Յունաստանի և Թուրքիոյ ծովեզերքներուն միջեւ բանելու: Եւրոպայի նաւահանգիստներն ալ պիտի երթուեկեն ընկերութեան շոգենաւները:

— Յորենի գինը սկսած է բարձրանալ Եւրոպայի և Ռուսիոյ հրապարակներուն վրայ:

— Ատանայի նահանգին մէջ բամպակի մշակութիւնը զարգացած ըլլալով կերպասի պատրաստութիւնն ալ աւելցած է: Այդ արտագրութիւնները մեծ ընդունելութիւն կը գտնեն շրջականները: Թարսուսի և Ատանայի բամպակի գործարանները շատ գործ ունին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԻԱՅԵԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐ ԵՒ ՍՊԱՆԻԱ.

— Ուրբաթ օր Բարիզ պիտի գումարին հաշտութեան վերջնական դաշնագիրը կնքող Յանձնաժողովին պատուիրակները: Կը կարծուի թէ Ամերիկեան պատուիրակները մտադիր են առաջարկել որ Փիլիպեանները բոլորովին Միացեալ-Նահանգներուն թողուի: Այս պահանջումը կ'ընեն նաեւ Ամերիկեան թերթերուն մեծ մասը և Մանիլայի բնակիչները: Մանիլայի կաթողիկ Արքեպիսկոպոսը անգամ սա կարծիքը յայտնեց է թէ՛ Սպանիա ամէն կերպով անկարող է Արչիպելագոսը բարեկարգելու, տեղացիները գոհացնելու: Ծովակալ Սերվէրա և Ամերիկացիներուն ձեռքը դերի ինկած Սպանիացի զօրքերը Սպանիա դարձան՝ ժողովրդեան և պաշտօնական անձնաւորութեանց կողմէ ընդունուեցան. ո՛րեւէ ցոյց տեղի չունեցաւ: Սպանիական զօրքերը Բոր-

Թոմարայէ դուրս կ'ելլեն, յառաջիկայ շաբթու Գուպա եւս պիտի պարպուի։ Սպանիական կառավարութիւնը ներում չնորհեց այն ամէն դատապարտեալներուն՝ որոնք իբր կամաւոր կռուեցան Սպանո-Սմերիկեան պատերազմին մէջ։

ՏՐԷՅՖԻԼԻ ՍԻՆԴԻՐԸ. — Տրէյֆիլսի խնդիրը քննելու պաշտօն ունեցող դատական Յանձնաժողովը երկու կուսակցութեան բաժնուած է, Վճռարեկ Ատենին երեք անդամները վերաքննութեան հակառակ են՝ իսկ դատական նախարարութեան մէջ պաշտօն ունեցող անդամները վերաքննութեան կուսակցից են։ Պ. Ֆէլիքս Փօռի նախագահութեամբ գումարուած նախարարներու խորհուրդին մէջ՝ դատական նախարար Պ. Սառիէնի սուած բացատրութեանց համեմատ որոշուեցաւ Տրէյֆիլսի դատին վերաբերեալ թղթերը Վճռարեկ Ատենին խորհել վերստին դատ տեսնուելու համար։ Էսթէրհազի ծանր ու կարեւոր յայանութիւններ ըրած է Անգլ. թերթերուն մէջ, որոնց եզրակացութիւնը սա է թէ՛ Տրէյֆիլս անմեղ ըլլալով ջանացած են նենդաւոր միջոցներով դատապարտել զանի։ Այս ամէն որոշումներն ու յայանութիւնները մեծ յուզում առաջ կը բերեն Բարիդի ժողովրդեան մէջ. ամէն կողմ միթիւններ կը գումարուին, մամուլը չափազանց այս խնդրով զբաղած՝ երկուքի կը բաժնուի, մին՝ վերաքննութիւն կը պահանջէ, միւսը՝ կը հակառակի այդ առաջարկին։ Օրէնքանի Դուքսը Տրէյֆիլսի խնդիրը պատրուակ բռնելով կը ջանայ միապետական գաղափարներու ուժ տալ հայրենասիրական խանդավառ ճառեր արտասանելով, որոնց մէջ Տրէյֆիլսի յանցապարտ ըլլալը կ'ընդունի ու դաւաճան կ'անուանէ անոնք որ կ'աշխատին անմեղ հանել զինքը։ Կ'ըսուի թէ երկրագործական նախարարը հրաժարեր է։ Պ. Ֆէլիքս Փօռ չընդունեց երեսփոխաններու պատուիրակութիւն մը, որ նպատակ ունէր խնդրել խորհրդարանին նստի

հրաւիրուիլ։ Մէկ խօսքով Ֆրանսա ահագին տագնապի մը մէջ է, կը վախցուի որ նախարարութիւնը չպիտի կրնայ իր գոյութիւնը պահել։

ՉԻՆԱՍՏԱՆ. — Չինական գործերը հեազհետէ կը կնճռոտին ու քաղաքական աշխարհին մեծ մտաւորանջութիւն կը պատճառեն։ Արտաքին գործերու նախարար Լի-Հունկ-Չանկ պաշտօնանկ եղաւ, տսիկա կը համարուի արդիւնք Անգլիոյ քաղաքական ազդեցութեան։ Ճաբոնի և Չինու յարաբերութիւնները խզուած են, բանակցութիւններ կ'ըլլան երկու աէրութեանց միջեւ։ Չինու կայսրը հրովարտակ մը հանեց՝ որով կարգ մը բարենորոգումներ կը հրամայէ, սակայն քիչ յետոյ զրոյց մը չըլեցաւ թէ կայսրը մեռաւ, ինչ որ ճշմարիտ չէ քանի որ նոր հրովարտակ մը հրատարակուեցաւ՝ որով Չինու կայսրը իշխանութենէ քաշուելով իրեն յաջորդ կը կարգէ իր մայրը։ Այս փոփոխումէն յետոյ է որ Չինու կայսեր խորհրդականը փախաւ ու Լի-Հունկ-Չանկ վերահաստատուեցաւ իր պաշտօնին մէջ։ Այս ամէնը Ռուս քաղաքականութեան ծրագիրներուն յաջողութիւնը կը համարուի, մանաւանդ կայսեր իշխանութենէ հրաժարումը որ անգլիասէր կը կարծուէր ու կուսակցից էր Ճաբոնի հետ յարաբերութեանց բարուրման գաղափարին։ Չինաստանի մէջ խռովութիւնը ամէն կողմ կը ծաւալի, մանաւանդ Բէքինի մէջ ուր կացութիւնը շատ ծանր է, անգլիական մարտանաւեր գացին Թաքու գետին եղերքները, որու վրայ շինուած է Բէքին։

ՄԵՐ ՌՈՏՈՍԹՈՅԻ բաժանորդներէն կը խնդրուի որ, առանց նոր գործակալի մ'ընտրութեան սպասելու, հաճին առայժմ գրոշմաթուղթով իրենց բաժնեգինը զրկել ցնոր տնօրինութիւն։

ՔՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՄԱՆԻՍԱ. — Գեղամ էֆ. Կ. Ունճեան. — Շնորհակալութիւն Ձեր համակրութեանց. իրաւունք ունիք, բայց թերթը սպուելէն վերջը ձեռքերդ հասած էր:

ԻԶՄԻՐ. — Կ. Մալճանեան էֆ. — Ղըր-կուեցան 24 թիւերը:

ԱՅՆԹԱՊ. — Ներսէս էֆ. Գ. Նիկողոսեան — Ստացած ենք, կը հրատարակենք. շնոր-հակալութիւն և Ձեր ջանքերուն:

ՍԱՄՍՈՆ. — Ղրկեցինք պակասները, դու-ծակալութեան համար վատահելի մէկը կը փնտաւի. ցնոր անորի՞նք թիւն կրնաք նա-մակը գրաւել դրկել. յիշեցուցէք և զայս, ե-թէ զիւրութիւն ունիք. Արշակ էֆ. Քէշե-ճեանի:

Ա.Գ.-Շէշիւր. — Գ. Մ. Էօլմէղեան էֆ. — Սխալմամբ Այսըն զրկուած էր. կրկին կը զրկենք Ձեր ճիշդ հասցէին: Մարգարեան էֆ. պիտի պատասխանէ:

ՍԻՆՈՊ. — Յ. Կ. էֆ. Պետրոսեան. — Ղրկեցինք, արդէն Զրաբքերեան էֆ. 146 սկսեալ ծրար մը. այս անգամ ալ կ'ստանաք պակասները:

ԱՅԻՕՆ-ԳԱՐԱ-ՀԻՐԱՅԻՐ. — Արտաշէս էֆ. Հալպալեան. — Ս. Սինանեան էֆ. մէկ դրութեան համաձայն արձանագրած ենք Ձեր անունը մեր գործակալաց ցանկին մէջ. հա-ճեցէք առաջին առթիւ տեղեկութիւն տալ մեզ բաժանորդաց և պակաս թիւերու մասին:

Թրիպոլի. — Գալուստ Յ. Գրլըճեան էֆ. — Կատանաք պակասները. հաճեցէք Ձեր հարցումը կրկնել, չենք ստացած:

ՏՐԱՊԻԶՈՆ. — Սահակ էֆ. Էթմէլճեան. — Ձեր նամակին կ'ուղարկենք. պակասները ի-մացուցէք:

ՄԱԼԿԱՐԱ. — Վ. Մ. Զօլաքեան էֆ. — Մասնաւոր նամակ գրեցինք. ստացած ըլլա-լու էք. հաճեցէք պակասները խնայել:

ԵԱՆԵԱ. — Արմենակ էֆ. Խորիկեան. — Ստացած ենք 11 ֆութայր, շնորհակալու-թիւն, և արձանագրեցինք բաժանորդաց ցանկին մէջ Ն. Թաճմիլըճեան էֆ.: Պակաս-ները դիւրեցան:

ՊԱՐՏԻԶԱԿ. — Ս. Մակարեան էֆ. — Անցեալ չարթու զրկեցինք. Ձեր նպատաւար-լութիւն անհամբեր կ'ապասեմք:

ԱՅՏԸՆ. — Օր. Զ. Եալըճեան. — Մաս-նաւոր նամակ զրկուեցաւ. լուծումները ստա-ցած ենք և կը հրատարակենք:

ԱՐՄԱՇ. — Հ. Տիրայր Վ. — Շառնա-կութեան անհամբեր կ'ուղարկենք, ինչպէս և Ձեր խոստումներուն:

ՆԻԿՈՍԻՊՈԼ. — Ա. Կ. Կառլճեան և Յ. Զափեան էֆ. ք. — Մասնաւոր նամակ զր-կուեցաւ:

ՇԳՈՏՐԱ. — Միհրան էֆ. Գալամաճեան — Յանձնուած էն նախորդ թիւերը Նա-տաճեան էֆ. Ի. և այս թիւէն սկսեալ Ձեր հասցէին կը զրկուին:

ԹԱՐՍՈՒՍ. — Ս. Ս. Գանձապետեան էֆ. — Թէպէտ մենք միայն մեր բաժանորդաց յանձնարարութիւնները կը կատարենք, բայց այս անգամ Ձերն ալ հաճութեամբ կատարե-ցինք, յուսաով որ քաջալերութեան համար դուք եւս պիտի հաճիք բաժանորդագրուիլ և անգլ ւարածել «Հանրագիտակ»ը, որ իր պարունակութիւններով շատ օգտակար կրնայ ըլլալ Ձեզ և Ձերայց օր:

ՀԱՄԱՐՈՒՄՈՒՆՈՒՄ

ՈՐ ԱՅՈՂՋՈՒԹԻՒՆ ԿՐ ՊԱՏԱՐԵ

Ճշմարտագործն ալ է, որ, ախր մեք ժա-մանք մը քննարկով հանդէս, առաջնութեան ալ մեծապէս կ'օգնէ: Երկուց պարս մէջ հա-ճալիք նիւթերը քաղաքիս են. ամբոյն պար-գացած ազգեր ամենէն աւելի թիւին նա-խապաշտութիւն կուտան, անոր համար որ, այս փանթաղին քննարկին ամենամեր յազ-նութիւնները շատով կ'օգնեն և նոր կրթու-իլ ենթարկէ. մարդ աւելի անգամ արիւնտարութեան վերականգն: Ձեր արեւելք տարածումով, մար-միւր ցարափն զէ՛ւ մը պարտաւորե՛լ, ամառն ալ զոմարթիւնն բժշակելով, շատ մ'հրաւի-րութեանց առաջըն կ'անեն: Երեսով պատ-րաստուած գաւաթ մը թէլը, անցնալի մսի թուրի հաւատարմեանը կը պարտաւորէ և իր անբաղդատելի աճնութեամբ կատարեալ նա-խախնամութիւն մըն է մարդկութեան համար: Մակարեան անգ որ թիւճ անուամբ ծախուած-ներու մեծապէս մար խաղախում քլա-լով գրուի են այս առաւելութիւններէն և դա-նենք ճաշիցանք շատ քիչ ապէս է, ուստի անոնք մէկ քիչ փախուցին ԸՆՏԸՆ, ԱՅՆԱՐՄԱՆ և միւ-նայն ամեն ԱՅՈՂՋ թէլ խնայ. պէտք է Կ. ԵԱՎՐԱՅԻՆ և Յ. ՊԱՐՏԻՊԻՆ ԸՆՏԸՆԹՅՈՒՆՆԵՐ ԹԵՂԵՐը գործնեն. աւագութեամբ փնտը-ւելով անոնց անունն ու մասնակիքը, առաւե-րու փայլ: Արմենակ թէլի այս մեծ փաճա-ւատան, իւր երկարամեայ փորձառութեամբ, արեւելեան երկիրներէ մեծաքանակ թէլ ար-տաճելուն և ահագին ապրանքներ սպասելուն շնորհիւ, միշտ անխաղախ թէլ կը ծախէ ԱՆՄԱՐՏԵԼԻ զէններով: Ընկերութեան Կեդրո-նաւորին է Կ. Պոլիս. ճէլալ Պ՛լ խան, թիւ 10:

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Կը խնդրուի թերթին հետ առնչութիւն
առնեցող ամեն անձերէ (գործակալ, բա-
ժանորդ, ևն.) որ բարեհաճին իրենց
թղթակցութիւնները ուղղել հետեւեալ
հասցէին, ԱՌԱՅՈՒԹԻՒՆ ՈՒՐԻՆ ՈՒՆԻ Է ՄԻՋ-
ՆՈՐԴԻ. հակառակ պարագային, եթէ
անպատեհութիւններ տեղի առնեն,
ամեն գանգատ անշուշտ մնալով, պա-
տասխանատու չենք ըլլար:

در علیّه ده بفتح قوسه ده اسکی ضبطیه ده
صوباجی پارسغ افدینک ۱۹ نومرو لی دکانه ده
«مجموعه علوم» غزنی سر محرری (بولاد) افدی به

Հ. Բոլատ Տնօրէն-Խմբագրատեալ
«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ»

19. Էսկի-Չապթիյէ, Պաղչէ-Գափու
Սթամպուլ

H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK,"

Chez M. Parsegh Hazarossian
19. Rue Eski-Zabtiş Bahdjé. Kapou. 19
Stamboûl

ՄԵՐ ՄԹԵՐԱՆՈՅ ԴԵՂՈՐԵՅ

Հ. ԱՐՄԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԷ

Կ. ՊՈԼԻՍ ՖԵՏԻԼԵԱՆ ԽԱՆԻ ՏԱԿ ԹԻԻՅ:

Սոյն վաճառատուն պատրաստ է մատա-
կարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝
ամեն տեսակ թարմ գեղորայք. վերա-
բուժական գործիքներ, Անդղիական և
Գաղղ. պատրաստ գեղեր, գօնեակներ,
գինիներ և հանքային ջուրերու մեծ
մթերք մը, յորմար գներով: Հ. Արսլան-
եան և Ս. Էմիրզէ Ընկերութիւնը երկար
տառն անձնական փորձառութիւններ
առնին: Ամեն ջանք և աշխատութիւն չեն
խնայեր իրենց յաճախորդներն գոհացը-
ելու համար, մասնաւոր ուշադրութիւնը
կը հրաւիրենք զաւառաց համար, որոնց
կը շրկեն գեղորայք, ամենայն արագու-
թեամբ, թարմ և մատչելի գներով:

ԳՈՐԾԱԿԱԼՔ ՀՀ ՆՐԱԳԻՏԱԿԻ

Այնքալ — Գորեղին էֆ. Պողարեան
Ասա-բազար — Ստեփան էֆ. Սափրիչեան
Արաբիք — Գ. Տէվէճեան էֆ.
Գուրս-Պէլէն Արժ. Տ. Ստեփան քահանայ
Մկրեան
Էրզնում — Եգ. էֆ. Տ. Աղարեան
Թեհրան — Կարապետ էֆ. Բարսեան
Իզմիր — Կարապետ էֆ. Մալեճեանեան
Իզմիս — Արթուր էֆ. Կ. Կտաճեան
Մալկարա — Վ. Մանուկ էֆ. Չօլաքեան
Խաբէրդ — Խոսրով էֆ. Քէլիչեան

Կեիպօլու — Յովսէփ էֆ. Տէր-Յովսէփեան
Կիրասոն. — Արմենակ էֆ. Սօմունճեան
Մարուս — Արժ. Տ. Յովհաննէս քահանայ
Վարժապետեան
Մանչեսթըր. — Յակոբ էֆ. Բոլատեան
Մուս. — Գեղամ էֆ. Տ. Կարապետեան
Պանսլումա. — Արմենակ էֆ. Ս. Մսերեան
Պարսիզակ. — Վահան էֆ. Ճիլանի
Պրուսա. — Օննիկ էֆ. Լութֆեան
Սաւսոն. — Կարապետ էֆ. Սէֆէրեան
Սըվազ. — Յ. էֆ. Գարակէօզեան
Տրապզոն. — Սահակ էֆ. Էթմէճեան

Հանրագիտակ կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար

Մաղրի-Գիւղ, Պողոս էֆ. Աղնաւորեանի խանութը,
Գատը-Գիւղ, Լեւոն էֆ. Չօլաքճեան Դեղարանը,
Բերա, Դեծ փողոց Գառնիկ էֆ. Կիւլէրեանի խանութը: